ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 02 փետրվարի 2007թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
2-րդ դատական կազմը
Նախագահությամբ՝ Կ.Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Պողոսյանի
Հ.Նազարյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Գեւորգ Գզրարյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Գեւորգ Գզրարյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետ. տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Գ. Գզրարյանի դիմումը՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Առաջարկել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն միավորել ՀՀ գլխավոր դատախազի (թիվ 8-1 դիմումը, 29.12.2006թ.), Տ. Սահակյանի (թիվ 6-26 դիմումը, 09.01.2007թ.), Ա. Կարախանյանի (թիվ 7-2 դիմումը, 11.01.2007թ.), Գ. Գզրարյանի (թիվ 6-28 դիմումը, 30.01.2007թ.) գործերի քննությունը՝ հաշվի առնելով նույն հարցի վերաբերյալ ներկայացրած դիմումները: